

8. Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգ, բնակչության հիվանդացություն և բուժսպասարկում

8.3. Հիվանդանոցների գործունեություն: 2002թ. ստացիոնար բուժման նպատակով հիվանդանոց են ընդունվել 197.4 հազ. մարդ, 1000 բնակչի հաշվով նրանք կազմել են 61: Հիվանդանոց ընդունվածների 15.8%-ը (31.1 հազ.) 0-14 տարեկան երեխաներն են: Հիվանդանոցային մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը կազմել է 153 մահճակալ/օր, իսկ մեկ հիվանդի բուժման միջին տևողությունը՝ 10.9 մահճակալ/օր:

Կատարվել է 75103 վիրահատություն, որի 17.0%-ը բաժին է ընկել 0-17 տարեկան երեխաներին կազմելով 12805, որից 80.4%-ը՝ կազմել են 0-14 տարեկան երեխաները:

2002թ. ընթացքում հիվանդանոցից դուրս է գրվել 194.5 հազ. մարդ (98.5%), մահացել՝ 3.2 հազ. մարդ (1.6%):

Երևանում հիվանդանոց ընդունվածների համեմատական բարձր ցուցանիշներն արդյունք են այն բանի, որ այդտեղ հիվանդանոցների հագեցվածությունն ավելի արդիական է, բուժսպասարկման որակն ավելի բարձր, անհրաժեշտ դեղամիջոցների ձեռք բերումն ավելի հեշտ: Այդ իսկ պատճառով հիվանդների մի մասը, իսկ Երևանին մոտիկ գտնվող բնակավայրերի հիվանդ բնակիչների զգալի մասը, գերադասում են բուժվել Երևանում:

Առողջապահության համակարգի օպտիմալացման հայեցակարգը (հավանության է արժանացել ՀՀ Կառավարության 2001թ. փետրվարի 5-ի թիվ 80 որոշմամբ) նախատեսում է առողջապահական մի շարք շինությունների ազատման, դրանց պահպանման ու շահագործման ծախսերի և կրճատված հաստիքների հաշվին կատարվելիք խնայողությունները հիմնականում ուղղել առողջապահության տարածաշրջանային համակարգի արդիականացմանը, անապահով բնակչության առողջության վերականգնմանը և պահպանմանը: Միայն 2001թ. ՀՀ մարզերում լուծարվել և վերակազմակերպվել են առողջապահական 104 հիմնարկներ, կրճատվել է 1882 հաստիք, 3982 մահճակալ, փակվել կամ միավորվել են թերծանրաբեռնված բաժանմունքներ:

Հիվանդանոցային մահճակալների զբաղվածությունը, 1990-2002թթ.

